ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գ. Գ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Տնտեսության սոցիալիստական սիստեմի պայմաններում կապիտալ ներդրումները այն հզոր զենքն են, որի շնորհիվ վերացվում են կապիտալիզմի ԽՈՂԱԾ այլանդակ ժառանգությունները արտադրողական ուժերի տեղաբաշխման ասպարեզում և իրագործվում արտադրողական ուժերի տեղաբաշխման սոցիալիստական սկզբունքները, ապահովվում է անցյալում տնտեսապես հետամնաց ծայրամասերի արագ զարգացումը։ Կապիտալ ներդրումների շնորհիվ է, որ ստեղծվում և պահպանվում են ժողովրդատնտեսական համամասնությունները, ապահովվում է ժողովրդական տնտեսության հարմոնիկ զարգացումը։ Եվ վերջապես կապիտալ ներդրումները վճռական դեր են խաղում ժողովրդի կենսամակարդակի և կուլտուրայի անընդհատ բարձրացման գործում, ստեղծելով դրանց նյութական նախադրյալները։

Տնտեսության սոցիալիստական սիստեմին հատուկ կապիտալ ներդրումների առավելությունները իրենց փայլուն արտացոլումը գտան նաև Սովետական Հայաստանում։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանում լայն թափով ծավալվեցին շինարարական աշխատանքները, որի շնորհիվ արմատապես վերափոխվեցին երկրի տնտեսությունն ու կուլտուրան, ստեղծվեց ժամանակակից բաղմաճյուղ արդյունաբերություն, բոլորովին նոր տեսք ստացան քաղաքներն ու ավանները, ստեղծվեցին մեծ թվով նոր բնակավայրեր, աննախընթաց չափերով բարելավվեցին ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական պայմանները։

Կապիտալ ներդրումների իրագործման հետևանքով տարեց-տարի աճում են ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերը։ Սոցիալիստական ընդլայնված վերարտադրության բարձր տեմպերը ենթադրում են հիմնական արտադրական ֆոնդերի վերարտադրության բարձր տեմպեր, որոնք իրենց հերթին ապահովում են ինչպես արտադրական, այնպես էլ ոչ-արտադրական հիմնական ֆոնդերի արագ աճը։ Սոցիալիստական ընդլայնված վերարտադրության բարձր տեմպերը ապահովելու գործում վճռական նշանակություն ունեն ոչ միայն կապիտալ ներդրումների ծավալն ու դինամիկան, այլև նրանց ուղղությունները, կառուցվածքը և արդյունավետության աստիճանը։

1. Կապիտալ ներդրումների դինամիկան

Կապիտալ ներդրումները ժողովրդական տնտեսության մեջ իրագործվում են տարբեր աղբյուրների հաշվին. դրանց շարքում իր ծավալով, տեսակարար կշռով և տնտեսական նշանակությամբ առաջին տեղը պատկանում է պետական կապիտալ ներդրումներին, որոնք կատարվում են պետության կողմից

հաստատվող ժողովրդատնտեսական պլանով և ֆինանսավորվում են կենտրոնացված կարգով, կուտակման ֆոնդի հաշվին։ Բացի դրանից կապիտալ ներդրումներ են կատարվում պետական ձեռնարկությունների օգուտների, կոոպերատիվ կազմակերպությունների միջոցների, կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի, հասարակական կազմակերպությունների (արհմիությունների և ստեղծագործական միությունների) միջոցների, ինչպես և բնակչության կողմից կատարված խնայողությունների հաշվին։ Այդ նշանակում է, որ կապիտալ ներդրումների լրիվ ծավալի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա բոլոր աղբյուրները։

Բացի այդ, պետք է նկատի ունենալ նաև մի այլ հանգամանք։ Պետական, կոոպերատիվ և կոլտնտեսային միջոցների հաշվին կատարվող կապիտալ ներդրումները օգտագործվում են արտադրական և սպառողական (ոչ-արտադրական) նշանակություն ունեցող հիմնական ֆոնդեր ստեղծելու նպատակով, մինչդեռ հասարակական կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին իրագործվող կապիտալ ներդրումները կատարվում են միմիայն սպառողական (ոչ-արտադրական) հիմնական ֆոնդեր բնակելի շենքեր, ակումբներ, սպորտային հրապարակներ, հանդստի տներ և այլն ստեղծելու նպատակով։

Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը հետևողականորեն իրագործելով լենինյան ազգային քաղաքականությունը և արտադրողական ուժերի տեղաբաշխման սոցիալիստական սկզբունքը, սովետական իշխանության գոյության առաջին իսկ տարիներից նյութական և ֆինանսական մեծ միջոցներ հատկացրին նախկինում տնտեսապես և կուլտուրապես հետամնաց ծայրամասերի արագ զարգացումն ապահովելու և այդպիսով Սովետական Միության տարբեր ազգերի միջև անցյալում առաջացած փաստացի անհավասարությունը վերացնելու նպատակով։ Դրա փայլուն օրինակ կարող է հանդիսանալ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան։

1921 թ. մինչև 1962 թ. ներառյալ Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության մեջ պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից (չհաշված կոլտնտեսությունների միջոցները) կատարվել են շուրջ երկու միլիարդ 390 մլն. ռուբլու կապիտալ ներդրումներ։ Ըստ առանձին փուլերի այդ ներդրումների դինամիկան հետևյալ պատկերն է ներկայացնում.

	1921—1928 թթ.	8	մլն ռուբլի
I	հնգամյակում	12	» »
II	հնգամյակում	112	» »
III	հնգամյակի 3,5 տարում	116	» »
	Հայրենական պատերազմի 1,5 տարիներին	76	» »
IV	հնգամյակում	239	» »
V	հնգամյակում	387	» »
	1956—1962 թթ.	1.313	» »

Այսպիսով՝ նշված ժամանակաշրջանում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ կատարված կապիտալ ներդրումների ամբողջ գումարի 55 տոկոսը իրագործված է վերջին 7 տարում։ Հատկապես բարձր տեմպերով է աճում կապիտալ ներդրումների ծավալը յոթնամյակի տարիներին։ Եթե 1956—1962 թթ. ընթացքում ներդրված է 1.313 մլն ռուբլի, ապա այդ գումարից 1956—1958 թթ., այսինքն յոթնամյակին նախորդող երեք տարում, ներդրված

1,384 մլն ռուբլի, իսկ յոթնամյակի չորս տարում՝ 929 մլն ռուբլի։ Իսկ եթե համեմատելու լինենք կապիտալ ներդրումների վերջին տարիների տեմպերը նախորդ ժամանակաշրջանների հետ, ապա մենք ավելի մեծ տարբերություն կնկատենք։ Այսպես՝ 1962 թ. ռեսպուբլիկայում իրագործված են 284 մլն ռուբլու կապիտալ ներդրումներ, այսինքն 6,7 անգամ ավելի, քան ամբողջ I հնգամյակի տարիներին և 2,5 անգամ ավելի, քան ամբողջ II հնգամյակի տարիներին։

2. Կապիտալ ներդրումների ուղղությունները

Կարևոր նշանակություն ունի նաև կապիտալ ներդրումների ուղղությունների հարցը, որը ցույց է տալիս, թե ժողովրդական տնտեսության որ ճյուղերի զարգացման նպատակով կապիտալ ներդրումների որ մասն է հատկացվել, և հետևապես այդ ճյուղերը ինչպիսի տեմպերով են զարգացել։

Արդյունաբերությունը, ինչպես հայտնի է, ժողովրդական տնտեսության գլխավոր, առաջատար ճյուղն է։ Նրա զարգացման բարձր տեմպերից է կախված ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արագ զարգացումը, ժողովրդի կենսամակարդակի անշեղ բարձրացումը։ Բնականաբար արդյունաբերության արագ զարգացումը միշտ էլ եղել է կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության ուշադրության կենտրոնում։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում տեղական հումքի, օգտակար հանածոների և էներգետիկ աղբյուրների օգտագործման միջոցով ստեղծվեց և գնալով բուռն թափով զարգանում է ժամանակակից տեխնիկայով զինված բազմաճյուղ արդյունաբերությունը, որի գլխավոր ճյուղերն են՝ էներգետիկան, գունավոր մետալուրգիան, քիմիական և մեքենաշինական արդյունաբերությունը։

Այդ նպատակով 1921—1962 թթ. ծախսվել է ամբողջ կապիտալ ներդրումների գրեթե կեսը՝ 46,3 տոկոսը (1062 մլն ռուբլի)։ Կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի աճին զուգընթաց աճել է նաև արդյունաբերության մեջ կատարված կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը։ Այսպես՝ առաջին հնգամյակի տարիներին արդյունաբերության մեջ ներդրվել է կապիտալ հատկացումների 32 տոկոսը, երրորդ հնգամյակի ընթացքում՝ 44 տոկոսը, իսկ հինգերորդ հնգամյակի տարիներին՝ 52 տոկոսը։ Սակայն վերջին տարիների ընթացքում հնարավորություններ ստեղծվեցին ավելացնել հատկացումները գյուղատնտեսության զարգացման և ժողովրդի անմիջական պահանջմունքները բավարարող միջոցառումների իրագործման, հատկապես բնակարանային շինարարությունը ծավալելու նպատակով, որի հետևանքով արդյունաբերության տեսակարար կշիռը կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի մեջ նորից սկսեց իջնել և 1956—1962 թթ. ընթացքում կազմեց 42,8 տոկոսը։ Բայց և այնպես, արդյունաբերության զարգացման համար վերը նշված տարիների ընթացքում հատկացվեցին 6 անգամ ավելի կապիտալ ներդրումներ, քան երկրորդ և երրորդ հնգամյակների $8^1/_2$ տարիներին միասին վերցրած։ Կապիտալ ներդրումների միջին տարեկան ծավալը փոփոխվել է հետևյալ կերպ։ Առաջին հնգամյակի տարիներին ժողովրդական տնտեսության մեջ իրագործված կապիտալ ներդրումների միջին տարեկան ծավալը կազմել է 8,4 մլն ռուբլի, չորրորդ հնգամյակում՝ 47,9 մլն ռուբլի, իսկ 1959—1962 թթ. ընթացքում՝ 233 մլն ռուբլի. այսինքն՝ յոթնամյակի տարիներին կապիտալ ներդրումների միջին

տարեկան ծավալը 5 անգամ ավելի է եղել, քան չորրորդ հնգամյակի տարիներին։ Նույնը պետք է ասել նաև արդյունաբերության մեջ կատարված կապիտալ ներդրումների միջին տարեկան ծավալի մասին։ Առաջին հնգամյակում նրա միջին տարեկան ծավալը կազմել է 3,1 մլն ռուբլի, չորրորդ հնգամյակում՝ 28,9 մլն ռուբլի, իսկ 1959—1962 թթ. ընթացքում՝ 105 միլիոն ռուբլի։ Ընդհանուր օրինաչափությունն այստեղ այն է, որ թե՛ ժողովրդական տնտեսության մեջ ամբողջովին վերցրած, թե՛ արդյունաբերության մեջ, որպես նրա առաջատար ճյուղի, կապիտալ ներդրումների միջին տարեկան ծավալը աճում է բարձր տեմպերով։ Բայց և այնպես այդ տեմպերի հարաբերակցությունը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում փոփոխվում է, և դա պայմանավորված է այն կոնկրետ խնդիրներով, որոնք առաջադրվում են սոցիալիստական շինարարության այս կամ այն որոշակի ժամանակաշրջանում։

Հայտնի է, որ արդյունաբերությունը ունի երկու ստորաբաժանում՝ արտադրության միջոցների արտադրություն և սպառման միջոցների արտադրություն, ըստ որում սոցիալիստական ընդլայնած վերարտադրության բարձր տեմպերը ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել առաջին ստորաբաժանման առավել արագ զարգացումը։ Հենց այդ քաղաքականությունն է, որ վարում են կոմունիստական պարտիան և սովետական պետությունը և դա իր արտացոլումն է գտնում նաև Սովետական Հայաստանում։

Սովետական իշխանության առաջին քսանամյակում ռեսպուբլիկայի արդյունաբերության արտադրանքի մեջ գերազանցող տեսակարար կշիռ ուներ երկրորդ ստորաբաժանումը, այսինքն սպառման միջոցների արտադրությունը։ 1913 թ. այն արդյունաբերության ամբողջ արտադրանքի մեջ կազմում էր 71 տոկոս, իսկ 1940 թ.՝ 59 տոկոս։ Բայց հետզհետե այդ հարաբերակցությունը փոփոխվեց։ 1962 թ. առաջին ստորաբաժանման տեսակարար կշիռը կազմեց 67 տոկոս, իսկ երկրորդ ստորաբաժանման տեսակարար կշիռը՝ 33 տոկոս։ Դա հետևանք էր այն բանի, որ տեղի ունեցան մեծ փոփոխություններ արդյունաբերության զարգացման նպատակով կատարված կապիտալ ներդրումների ուղղությունների մեջ։ Այսպես, արդյունաբերության մեջ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարից՝ 1062 մլն ռուբլուց, 840 մլն ռուբլի, այսինքն 79 տոկոսն օգտագործված է արտադրության միջոցների արտադրության համար հիմնական արտադրական ֆոնդեր ստեղծելու նպատակով, իսկ 222 մլն ռուբլը, այսինքն 21 տոկոսը՝ սպառման միջոցների արտադրության զարգացման նպատակով։ Նշված 840 մլն ռուբլուց 502 մլն ռուբլին ներդրված է վերջին 4 տարիների ընթացքում, այդ թվում 368 մլն ռուբլին՝ յոթնամյակի առաջին չորս տարիներին (1959—1962 թթ.)։

Այս բոլորը վկայում են, թե ինչպիսի բարձր տեմպերով է ծավալվում կապիտալ շինարարությունը ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ ամբողջապես վերցրած և արտադրության առաջին ստորաբաժանման գծով՝ մասնավորապես։ Հենց դրանով պետք է բացատրել արդյունաբերության ճյուղային կառուցվածքի այն մեծ և դրական նշանակություն ունեցող փոփոխությունները, որ տեղի ունեցան վերջին տարիների ընթացքում։ 1952—1962 թթ. պետական կապիտալ ներդրումները արդյունաբերության մեջ կազմել են 618 մլն ռ., որից գունավոր մետալուրգիայի զարգացման համար ծախսվել է 142 մլն ռ. (23 տոկոսը), էներգետիկայի գծով՝ 113 մլն ռ. (18 տոկոսը), քիմիական արդյունաբերության գծով՝ 100 մլն ռ. (16 տոկոսը), շինանյութերի արտադրու-

թյան դծով՝ 92 մլն ռ. (15 տոկոսը), մեքենաշինության դծով՝ 84 մլն ռ. (13,6 տոկոսը)։ Նույն ժամանակամիջոցում թեթև և սննդի արդյունաբերության զարգացման համար կատարված են 79 մլն ռ. կապիտալ ներդրումներ կամ արդյունաբերության մեջ ներդրված ընդհանուր գումարի 12, 7 տոկոսը։ Այդ նշանակում է, որ սպառման միջոցների արտադրության ընդարձակման նպատակով նշված ժամանակամիջոցում ներդրված է ավելի քիչ, քան արտադրության առաջին ստորաբաժանման յուրաքանչյուր ճյուղում առանձին վերցրած։ Սակայն դրանից չի կարելի անել այն հետևությունը, թե սպառման միջոցների արտադրության ընդարձակմանը անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում։ Պետք է նկատի ունենալ մի կողմից այն սերտ կապը, որ գոյություն ունի արտադրության միջոցների արտադրության և սպառման միջոցների արտադրության միջև, մյուս կողմից այն, որ ինքը արտադրության միջոցների արտադրությունը տրոհվում է երկու ենթախմբերի՝ արտադրության միջոցների արտադրություն՝ արտադրության միջոցներ արտադրելու համար և արտադրության միջոցների արտադրություն՝ սպառման միջոցներ արտադրելու համար։ Ռեսպուբլիկայի արդյունաբերության շատ ձեռնարկություններ, որոնք պատկանում են առաջին խմբին, ծառայում են փաստորեն երկրորդ խմբի արտադրություններ, այսինքն սպառման միջոցների արտադրության ընդարձակման նպատակին։ Օրինակ, Կիրովականի ացետատային մետաքսաթելի գործարանը դասվում է արտադրության միջոցների արտադրության շարքը, բայց նրա արտադրանքը օգտագործվում է սպառման միջոցների արտադրության ընդարձակման նպատակին։

Վերջին տարիների ընթացքում, պարտիայի ու կառավարության որոշումների համաձայն, կապիտալ ներդրումների ուղղությունների մեջ կատարվեցին մի շարք կարևոր տեղաշարժեր։ Արդյունաբերության մեջ ամբողջությամբ վերցրած դրանք արտահայտվեցին նրանում, որ թեթև և սննդի արդյունաբերության և ընդհանրապես ժողովրդական սպառման ապրանքների արտադրության տեմպերը արագացնելու նպատակով ավելացվեցին նշված ճյուղերի զարգացման համար կատարվող կապիտալ ներդրումները։

Լուրջ տեղաշարժեր տեղի ունեցան նաև արդյունաբերության առաջին ստորաբաժանման վերը նշված երկու խմբերի գծով կատարվող հատկացումների մեջ. ավելացան առաջին ստորաբաժանման երկրորդ ենթախմբի՝ սպառման միջոցների արտադրությունը ընդլայնելու նպատակով արտադրության միջոցների արտադրության զարգացման համար իրագործվող կապիտալ ներդրումները։ Կապիտալ ներդրումների ուղղությունների մեջ զգալի տեղաշարժեր կատարվեցին ՍՄԿՊ Կենտկոմի 1958 թ. մայիսյան պլենումի որոշումների հիման վրա՝ քիմիական արդյունաբերության զարգացման տեմպերն արագացնելու նպատակով։

Այսպես, եթե 1952—1957 թթ. ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ պետական կապիտալ ներդրումները կազմել են 227,8 մլն ռ., որից քիմիական արդյունաբերությանը հատկացված է եղել 13,7 մլն ռ., այսինքն ընդամենը 6 տոկոսը, ապա 1958—1962 թթ. արդյունաբերության հատկացված կապիտալ ներդրումների 396,8 մլն ռուբլուց 86,8 մլն ռուբլին, այսինքն 22 տոկոսը, ծախսվել է քիմիական արդյունաբերության զարգացման համար։ Այդ տարիներին շարք մտան մի քանի քիմիական նոր ձեռնարկություններ և ցեխեր, դրանց թվում և Կիրովականի ացետատային մետաքսաթելի գործարանը։ Դրանով

զգալիորեն արագացան քիմիական արդյունաբերության զարգացման տեմպերը։ Բնականաբար, այս տեղաշարժերը տվել են իրենց դրական արդյունքները։ Եթե 1962 թ. 1955 թ. համեմատությամբ ռեսպուբլիկայի արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի աճը կազմել է 212 տոկոս, ապա քիմիական արդյունաբերության մեջ այն կազմել է 251 տոկոս. 1962 թ. 1958 թ. համեմատությամբ արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերը կազմել են 161 տոկոս, քիմիական արդյունաբերության մեջ՝ 218 տոկոս. արդյունաբերության արտադրանքը 1962 թ. 1955 թ. համեմատությամբ կազմեց 198 տոկոս, քիմիականը՝ 254 տոկոս։ 1962 թ. ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքը աճել է 1950 թ. համեմատությամբ 3,8 անգամ, այդ թվում քիմիական արդյունաբերությանը՝ 6,6 անգամ։

Ուշագրավ են այն ներդրումները, որ կատարվում են նյութական արտադրության այնպիսի կարևոր ճյուղում, որպիսին գյուղատնտեսությունն է։ Ի տարբերություն արդյունաբերության, այստեղ կապիտալ ներդրումներն իրագործվում են ինչպես պետական միջոցների, այնպես էլ կոլտնտեսությունների միջոցների հաշվին։ Ըստ որում, տարիների ընթացքում ոչ միայն աճում է նյութական արտադրության այդ կարևոր ճյուղում իրագործվող կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը, այլև փոփոխվում է պետության և կոլտնտեսությունների կողմից գյուղատնտեսության զարգացման նպատակով իրագործվող կապիտալ ներդրումների համամասնությունը։ Այսպես, 1921—1962 թթ. ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 559,5 մլն ռ., որից 228,2 մլն ռուբլի ներդրվել է պետության և 331,3 մլն ռ. կոլտնտեսությունների կողմից։ Նշանակալից փաստ է, որ կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը գյուղատնտեսության մեջ 1956—1962 թթ. կազմել է շուրջ 253 մլն ռ., այսինքն մոտավորապես այնքան, որքան սովետական իշխանության գոյության նախորդ 25 տարիների ընթացքում։ Վերջին տարիներին, գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացման տեմպերն արագացնելու նպատակով պարտիայի ընդունած կուրսի համաձայն, պետական կապիտալ ներդրումների ծավալը գյուղատնտեսության մեջ աճում է ավելի արագ, քան կոլտնտեսությունների միջոցների հաշվին իրագործվող կապիտալ ներդրումները։ Այդ կարելի է նկատել հետևյալ աղյուսակի տվյալներից (միլիոն ռուբլիներով).

	1956—1958	1959—1962
Կապիտալ ներդրումները գյուղատնտեսության մեջ	82,6	170,1
Այդ թվում՝		
Պետական	36,5	90,0
Կոլտնտեսային	46,0	79,1

Այս տվյալները վկայում են, թե ինչպիսի մեծ հոգատարություն է ցուցաբերում սովետական պետությունը գյուղատնտեսության վերելքն ապահովելու համար։

Պարտիան խնդիր է դրել առաջիկա տարիների ընթացքում վերացնել բնակչության պակասը, մի հանգամանք, որը սովետական մարդկանց կենսական պահանջները բավարարելու տեսակետից հսկայական նշանակություն ունի։ Այդ խնդրի լուծման նպատակով տարեցտարի աճում է բնակարանային շինարարության գծով կատարվող կապիտալ ներդրումների ծավալը։ Այսպես՝

1956—1958 թթ. այդ նպատակով նախատեսված էր 76,6 մլն ռ., իսկ 1959—1962 թթ.՝ 176,7 մլն ռ.։ Բնակարանային շինարարության համար վերջին 7 տարում կատարվել են ավելի շատ կապիտալ ներդրումներ, քան նախորդ 35 տարիներին։

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման, ժողովրդի կենսապայմանների բարելավման նպատակով իրագործվեցին զգալի չափերի հասնող կապիտալ ներդրումներ։ Ըստ որում, տարեցտարի աճում է դրանց ծավալը։ Սոցիալիստական շինարարության ձեռք բերած նվաճումներին համապատասխան և հետագա վերելքն ապահովելու նպատակով սիստեմատիկաբար վերանայվում և առաջացած պահանջներին համապատասխան փոփոխվում է կապիտալ ներդրումների կառուցվածքը, բարձրացվում դրանց դերը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում։

3. Կապիտալ ներդրումների արդյունավետությունը

Կապիտալ ներդրումների անմիջական արդյունավետությունը, ինչպես արդեն նշել ենք, հիմնական ֆոնդերի աճն է։ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի լրիվ պատկերը մենք ստացանք միայն 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ անցկացված գլխավոր հաշվառման տվյալների հիման վրա։ Ըստ այդ տվյալների՝ Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի ընդհանուր ծավալը վերականգնման արժեքով կազմել է մոտ 1,97 միլիարդ ռ., որից պետական և կոոպերատիվ կազմակերպությունների հիմնական ֆոնդերը՝ 1,4 միլիարդ ռուբլի, կոլտնտեսությունների հիմնական ֆոնդերը՝ 2,1 միլիոն ռ., բնակչության անձնական սեփականությունը կազմող հիմնական ֆոնդերի գումարը՝ 3,6 միլիոն ռ.։ Ռեսպուբլիկայի ամբողջ հիմնական ֆոնդերի 52,5 տոկոսը կազմում են արտադրական հիմնական ֆոնդերը, այդ թվում արդյունաբերությանը՝ 26,5 տոկոսը, գյուղատնտեսությանը՝ 15,5 տոկոսը։ Հիմնական ֆոնդերի մնացած մասը՝ 42,5 տոկոսը կազմում է ոչ-արտադրական հիմնական ֆոնդերը, այդ թվում 29 տոկոսը բնակարանային տնտեսության։

Թե ինչպիսի հարաբերության մեջ են կապիտալ ներդրումները և դրանց շնորհիվ ստեղծված հիմնական ֆոնդերի ծավալը ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերում, կարելի է նկատել ստորև բերված տվյալներից։

Կապիտալ ներդրումները և հիմնական ֆոնդերը Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության մեջ (պետական, կոոպերատիվ և կոլտնտեսային միջոցների հաշվին) (միլիոն ռուբլիներով).

	Կապիտալ ներդրումներ 1921—1959 թթ.	Ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերը առ 1-ը հունվարի 1960 թ.
Ընդամենը	1.821,4	1604,5
Այդ թվում՝		
Արդյունաբերություն	731,0	521,0
Գյուղատնտեսություն	417,0	334,0
Տրանսպորտ և կապ	98,9	179,0
Բնակարանային տնտեսություն	260,8	261,0

Տվյալները ցույց են տալիս, որ կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը գերազանցում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության հիմնական

ֆոնդերի ծավալը։ Եվ դա բնական է, քանի որ նախ Սովետական Հայաստանը ժառանգել է նախորդ կարգերից ոչ մեծ հիմնական ֆոնդեր և երկրորդ՝ այդ ֆոնդերի զգալի մասը, ինչպես և սովետական իշխանության տարիներին ստեղծված հիմնական ֆոնդերի մի մասը, իրենց գործածության ժամկետը ավարտել և արժեզրկվել են։ Բնորոշ է սակայն այն, որ տրանսպորտի և կապի հիմնական ֆոնդերի ծավալը զգալի չափերով մեծ է դրանց ստեղծման նպատակով իրագործած կապիտալ ներդրումներից. դա բացատրվում է նրանով, որ երկաթուղային տրանսպորտում զբաղված հիմնական ֆոնդերի զգալի մասը ստեղծվել է դեռևս նախահեղափոխական շրջանում և այժմ էլ շարունակում է օգտագործվել։ Մյուս կողմից, ինչպես ցույց են տալիս տվյալները, բնակարանային տնտեսության մեջ զբաղված հիմնական ֆոնդերի ծավալը ամբողջապես համընկնում է դրանց ստեղծման համար կատարված կապիտալ ներդրումների ծավալին։ Դա պետք է բացատրել նրանով, որ նույնիսկ բնակարանային տնտեսության գծով Սովետական Հայաստանը նախորդ կարգերից շատ քիչ բան է ժառանգել, որի մեծ մասն էլ ոչնչացվել է։ Մինչդեռ Սովետական Միության այլ ռեսպուբլիկաներում և որոշ մարզերում բնակարանային տնտեսության մեջ զբաղված հիմնական ֆոնդերի ծավալը գերազանցում է այդ նպատակով կատարված կապիտալ ներդրումների ծավալը։

Կապիտալ ներդրումների ծավալի անշեղ աճը հնարավորություն տվեց ստեղծել զգալի չափերի հասնող արտադրական կարողություններ։ Այսպես, էլեկտրակայանների հզորությունը 1913 թ. 3,1 հազ. կվտ-ից 1940 թ. հասավ 113 հազ. կվտ-ի, 1950 թ.՝ 184 հազ. կվտ-ի, իսկ 1962 թ.՝ 650 հազ. կվտ-ի։ Ստեղծվեցին մեծ կարողություններ գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերում։ Արդյունաբերության մեջ տեղադրված մետաղամշակման հաստոցների քանակը 1932 թ. 363-ի և 1940 թ. 1179-ի փոխարեն 1960 թ. հասավ 13134-ի։ Միայն արդյունաբերության համար կառուցվել են 6168 շենք, 2565 հազ. քառ. մետր տարածությամբ, որից արտադրական նշանակություն ունեցող 3353 շենք 1852 քառ. մետր տարածությամբ։

Ռեսպուբլիկայում կառուցվել են 600-ից ավելի խոշոր գործարաններ, ֆաբրիկաներ, էլեկտրակայաններ, հանքեր և արդյունաբերական այլ օբյեկտներ, որոնցից 144-ը՝ հետպատերազմյան տարիներին։ Այժմ ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ գործող համարյա բոլոր արտադրական հիմնական ֆոնդերը ստեղծված են սովետական իշխանության տարիներին, իսկ նրա զգեթե կեսը՝ վերջին 7 տարում։

Արդյունաբերության արտադրական հիմնական ֆոնդերը 1962 թ. 1955 թ. համեմատությամբ կազմել են 212 տոկոս, իսկ 1958 թ. համեմատությամբ աճել են 61 տոկոսով։ Կապիտալ ներդրումների ուղղությունների մեջ տեղի ունեցած փոփոխություններին համապատասխան տեղի են ունեցել նաև համապատասխան կառուցվածքային փոփոխություններ ինչպես ամբողջ ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի, այնպես էլ արդյունաբերության արտադրական հիմնական ֆոնդերի կառուցվածքի մեջ։ Էներգետիկայում զբաղված է հիմնական ֆոնդերի 1/4-ից ավելին։ Բարձրացել է քիմիական արդյունաբերության և մեքենաշինության տեսակարար կշիռը արդյունաբերության հիմնական ֆոնդերի մեջ։ Միաժամանակ արագ տեմպերով աճել են նաև ոչ-արտադրական ֆոնդերը։ Այսպես, պետական ու կոոպերատիվ կազմակեր-

պությունների հաշվին կառուցվել են 4,2 մլն. քառ. մետր ընդհանուր տարածությամբ բնակելի տներ։ Միմիայն պետության հաշվին կառուցվել է 1198 դպրոցական շենք, 285 հազ. աշակերտական տեղերով, սանատորիաներ և հանդրստի տներ՝ 4,3 հազ. մահճակալով, հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ՝ մոտ 5,6 հազ. մահճակալով, մանկապարտեզներ և մանկամսուրներ՝ 17,7 հազ տեղով։

Արդյունաբերության արտադրական հիմնական ֆոնդերի արագ աճը հնարավորություն տվեց ապահովելու նաև նրա համախառն արտադրանքի արագ աճը։ Այսպես, 1940 թ. ռեսպուբլիկայի արդյունաբերության արտադրանքը գերազանցեց 1913 թ. մակարդակը 8,7 անգամ, 1940—1950 թթ. այն աճեց ևս 2,5 անգամ, իսկ 1956—1962 թթ.՝ 98 տոկոսով։ Այսպիսով, 1962 թ. արդյունաբերության արտադրանքը գերազանցեց 1913 թ. մակարդակը 81, 5 անգամ։

Հիմնական ֆոնդերի վերարտադրության տեմպերը, հետևապես և կապիտալ ներդրումների արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն կապիտալ ներդրումների ծավալով, այլև մի շարք այլ գործոններով. դրանց թվին են պատկանում՝ կապիտալ ներդրումների ճիշտ պլանավորումը, նրանց ուղղությունների ճիշտ որոշումը, հատկացված ֆինանսական և նյութական միջոցների կենտրոնացումը գործարկման ենթակա օբյեկտների վրա (այլ խոսքով ասած՝ նրանց ցրվածության վերացումը), շինարարության ժամկետների կրճատումը և, վերջապես, կապիտալ ներդրումների կառուցվածքի բարելավումը։

ՍՄԿՊ նոր ծրագրում ասված է. «Պարտիան առաջնակարգ նշանակություն է տալիս կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացմանը, կապիտալ աշխատանքների առավել շահավետ ու խնայողական ուղղություններ ընտրելուն, կապիտալ ներդրումների յուրաքանչյուր ծախսված ռուբլու դիմաց արտադրանքի առավել աճ ապահովելուն, այդ ներդրումների փոխհատուցման ժամկետները կրճատելուն։ Պահանջվում է մշտապես բարելավել կապիտալ ներդրումների ստրուկտուրան և դրանց կազմի մեջ բարձրացնել սարքավորումների, մեքենաների, հաստոցների բաժինը»[1]։

Կապիտալ ներդրումների բարձր արդյունավետությունը պահանջում է ոչ միայն կապիտալ ներդրումների պլանների կատարման ապահովում, այլև հիմնական ֆոնդերի գործարկման պլանների կատարում, շինարարության ժամկետների կրճատում։ Այդ տեսակետից մեր ռեսպուբլիկայում դեռևս գոյություն ունեն լուրջ թերություններ, որոնց մասին փկայում են ստորև բերվող տվյալները։

Կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի գործարկման պլանների կատարումը Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության մեջ (տոկոսներով).

Տարիներ	Կապիտալ ներդրումների պլանների կատարողականը	Հիմնական ֆոնդերի գործարկման պլանների կատարողականը
1956	101,6	73,5
1957	99,0	66,0
1958	96,9	88,0
1959	95,6	80,0
1960	96,1	77,2
1961	91,4	63,6
1962	98,5	72,6

1 ՍՄԿՊ ծրագիր, Հայպետհրատ, 1961, էջ 103։

Այսպիսով, հիմնական ֆոնդերի դործարկման պլանային առաջադրանքները թերակատարվում են, թեև նրանց բացարձակ ծավալը աճում է։

Կապիտալ ներդրումների ասպարեզում դոյություն ունեցող ցրվածությունն է հիմնական ֆոնդերի դործարկման պլանների թերակատարման դլխավոր պատճառը։ Դրա անմիջական բացասական հետևանքը անավարտ շինարարության ծավալի աճն է։

Թե ինչպիսի փոփոխություններ են կատարվել կապիտալ ներդրումների ծավալի, հիմնական ֆոնդերի դործարկման ծավալի և անավարտ շինարարության ծավալի մեջ յոթնամյակի տարիներին, կարելի է նկատել ստորև բերված տվյալներից (միլիոն ռուբլիներով).

Տարիներ	Կապիտալ ներդրումներ	Հիմնական ֆոնդերի դործարկումը	Անավարտ շինարարության ծավալը
1958	158,0	142,0	102,9
1959	190,0	166,0	113,4
1960	211,0	184,0	144,0
1961	244,0	185,0	190,9
1962	284,0	261,0	201,8

Այսպիսով, հիմնական ֆոնդերի դործարկման պլանների թերակատարման հետևանքով տարեցտարի ավելանում է անավարտ շինարարության ծավալը, հետևապես հսկայական նյութական ու ֆինանսական միջոցներ սառեցվում են և ժամանակին չեն տալիս սպասվող արդյունքը։

Թեև 1962 թ. դործարկվել են նախորդ տարվա համեմատությամբ 76 միլիոն ռուբլով (46 տոկոսով) ավելի հիմնական ֆոնդեր, այնուամենայնիվ, անավարտ շինարարության ծավալը ավելացավ 11,1 միլիոն ռուբլով։ Բայց եթե նկատի ունենանք, որ կապիտալ ներդրումների ծավալը 1962 թ. աճել է 1961 թ. համեմատությամբ 40 միլիոն ռուբլով, ապա պարզ կլինի, որ կապիտալ ներդրումների արդյունավետությունը որոշ չափով բարձրացել է։

Սովետական կառավարությունը 1964—1965 թթ. համար իրադործեց կապիտալ ներդրումների պլանավորման նոր տեղբունք, որը կնպաստի անավարտ շինարարության ծավալի դդալի կրճատմանը, նրա արդյունավետության բարձրացմանը։

Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև նրա կառուցվածքի բարելավումը։ Նյութական արտադրության, հատկապես արդյունաբերության մեջ իրադործվող կապիտալ ներդրումները բաժանվում են երկու հիմնական մասերի՝ հատկացումներ շինարարական-մոնտաժային աշխատանքի և տեղադրվելիք սարքավորումների ձեռք բերման համար։ Ժողովրդական տնտեսության, ինչպես և արդյունաբերության տարբեր ճյուղերում դրանց տեսակարար կշիռը կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում տարբեր է, և դա պայմանավորված է արտադրության յուրահատկություններով։ Որքան բարձր է տեղակայվող սարքավորումների տեսակարար կշիռը կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում, այնքան բարձր է կապիտալ ներդրումների արդյունավետությունը, որովհետև արտադրական ֆոնդերի հենց այդ մասն է, որ ամենաակտիվ դերն է կատարում նյութական բարիքների ստեղծման դործում։ Շինմոնտաժային աշխատանքների տեսակարար կշիռը ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության

մեջ իրականացված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում հետևյալ պատկերն է ներկայացնում (տոկոսներով).

I հնգամյակ	II հնգամյակ	III հնգամյակ	IV հնգամյակ	V հնգամյակ	1956—1962 թթ.	Ամբողջը
83,0	83,0	78,0	67,0	72,0	66,2	69,6

Այսպիսով, ակնհայտ է նախ՝ շինմոնտաժային աշխատանքների մեծ տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ իրագործված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում, երկրորդ՝ շինմոնտաժային աշխատանքների տեսակարար կշռի իջեցման ընդհանուր տենդենցը, որը հատկապես դրսևորվեց վերջին տարիների ընթացքում, երբ պլանավորող օրգաններն սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման հարցերին։ Այսպես՝ 1958 թ. շինմոնտաժային աշխատանքների տեսակարար կշիռը կազմել է 72, 1959 թ.՝ 69, 1960 թ.՝ 67, 1961 թ.՝ 63, իսկ 1962 թ.՝ 62 տոկոս. այսինքն՝ վերջին 4 տարում շինմոնտաժային աշխատանքների տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ իրագործված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում իջել է 10 տոկոսով։ Նույնպիսի տեղաշարժեր են տեղի ունենում նաև արդյունաբերության բնագավառում իրագործվող կապիտալ ներդրումների կառուցվածքի մեջ։ Այսպես՝ 1956—1958 թթ. շինմոնտաժային աշխատանքի համար ծախսվել է կապիտալ ներդրումների 65,2, իսկ 1959—1962 թթ.՝ 57,8 տոկոսը։ Չնայած կապիտալ ներդրումների կառուցվածքի բարելավման ասպարեզում ձեռք բերած նվաճումներին, պետք է նշել, որ այն դեռևս կարիք ունի հետագա լուրջ բարելավման. սարքավորումների ձեռք բերման համար ներդրվող միջոցների տեսակարար կշիռը պետք է էլ ավելի բարձրացվի. այդ բանի հնարավորություններն ու անհրաժեշտությունը առկա են հատկապես քիմիական նյութերի օգտագործման և շինարարության ինդուստրացման պայմաններում. դրանով էլ ավելի կբարձրացվի կապիտալ ներդրումների արդյունավետությունը։

Կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման համար մեծ նշանակություն ունի նաև համապատասխան փոփոխությունների ժամանակին կատարումը նրա ուղղությունների մեջ։ Կապիտալ ներդրումների ուղղությունների հարցը ունի ոչ միայն մեծ տնտեսական նշանակություն, այլև առաջնակարգ քաղաքական նշանակություն։ Ահա թե ինչու կոմունիստական պարտիան և սովետական պետությունը սոցիալիստական շինարարության տարբեր էտապներում կապիտալ ներդրումների ուղղությունները որոշելիս միշտ էլ ելել են տվյալ ժամանակաշրջանում երկրի առաջ ծառացած քաղաքական ու տնտեսական խնդիրների լուծման շահերից։ Այդ են կապիտալ ներդրումների արդյունավետության որոշման չափանիշները այն շրջանում, երբ պարտիան լուծում էր երկրի ինդուստրացման, անցյալում տնտեսապես հետամնաց ծայրամասերի արագ զարգացումն ապահովելու և ՍՍՌՄ ժողովուրդների միջև գոյություն ունեցող փաստացի անհավասարության վերացման հարցերը և այլ՝ այսօր, երբ նշված խնդիրները լուծված են, երբ երկիրը թևակոխել է կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը։ Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը պահանջում է առավել արագ տեմպերով զարգացնել նյութական արտադրության ամենից ավելի կարևոր ճյուղերը, ըստ ամենայնի արմա-

տավորել գիտության և տեխնիկայի ժամանակակից նվաճումները և արագացնել տեխնիկական առաջադիմությունը. այդպիսով, զգալի չափերով կբարձրանա հասարակական աշխատանքի արտադրողականությունը, որը կոմունիզմի հաղթանակի վճռական պայմանն է։ Ահա թե ինչու ՍՄԿՊ 1963 թ. դեկտեմբերյան պլենումը անհրաժեշտ համարեց զգալի չափերով ավելացնել կապիտալ ներդրումները քիմիական ինդուստրիայի զարգացման, երկրի քիմիացման տեմպերը արագացնելու համար, որը տեխնիկական առաջադիմության կարևորագույն օղակներից մեկն է։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը, որը պարտիայի և սովետական ժողովրդի գլխավոր տնտեսական խնդիրն է, մասնակցում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները։ Հայաստանի աշխատավորները նույնպես իրենց ավանդն են ներդնում այդ պատմական խնդրի իրականացման գործում։ Տարեցտարի աճում և հզորանում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությունը. կարևորագույն նախադրյալներից մեկը այստեղ կապիտալ ներդրումների էլ ավելի արագ աճն է։

Յոթնամյակի մնացած երկու տարիների ընթացքում, 1964—1965 թթ., ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ պետական պլանով, այսինքն՝ միմիայն կենտրոնացված կապիտալ ներդրումները, կազմելու են 651 մլն ռ., այնքան, որքան ծախսվել է յոթնամյակի առաջին 4 տարում։ Ըստ որում, 1964 թ. դրանք կազմելու են 313 մլն ռ., իսկ 1965 թ.՝ 338 մլն ռ.։

Հատկապես զգալի չափերով են աճում կապրտալ ներդրումները քիմիական արդյունաբերության և գյուղատնտեսության գծով։ Քիմիական արդյունաբերության մեջ նշված երկու տարիների ընթացքում կապիտալ ներդրումների գումարը հավասարվելու է յոթնամյակի առաջին չորս տարիներին արդյունաբերության այդ ճյուղում կատարած ներդրումներին։ Ավարտվելու են Ս. Մ. Կիրովի անվան գործարանի վերակառուցման և ընդարձակման, ինչպես և «Պոլիվինիլացետատ» գործարանի, Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի, Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատի վերակառուցման և ընդարձակման աշխատանքները, կառուցվելու են Կիրովականի քիմիական մետաքսաթելի գործարանի երկրորդ հերթը, վիտամինի և քիմիական ռեակտիվների գործարանները։ Ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքը նշված երկու տարիների ընթացքում ավելանալու է 26 տոկոսով, իսկ քիմիական արդյունաբերության համախառն արտադրանքը՝ 54 տոկոսով։ Ըստ որում, առաջիկա երկու տարում սինթետիկ կաուչուկի արտադրությունը կավելանա 29 տոկոսով, ծծմբաթթվուտի արտադրությունը՝ 3,6 անգամ, սինթետիկ ձյութի և պլաստմասսայի արտադրությունը՝ 3,9 անգամ։

Նախորդ տարիների համեմատությամբ զգալի չափով ավելանում են պետական կապիտալ ներդրումները նաև գյուղատնտեսության գծով։ 1962—1963 թթ. ընթացքում պետական կապիտալ ներդրումները ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ կազմել են 50 մլն ռ., իսկ 1964—1965 թթ. կազմելու են 106 մլն ռ., այդ գումարի զգալի մասը ծախսվելու է ջրաշինարարության վրա, գյուղատնտեսական մթերքների արտադրությունը ավելացնելու նպատակով։ 1965—1970 թթ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները կաճեն ավելի արագ տեմպերով, դրանով կստեղծվեն արտադրողական ուժերի նոր վերելքի և ժողովրդի կենսապայմանների հետագա բարելավման բոլոր նյութական նախադրյալները։

КАПИТАЛЬНЫЕ ВЛОЖЕНИЯ В НАРОДНОЕ ХОЗЯЙСТВО СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Г. Д. ИСААКЯН

(Резюме)

При социалистической системе народного хозяйства капитальные вложения являются могучим орудием для ликвидации уродливого наследия капитализма в области размещения производительных сил, обеспечивают осуществление социалистического принципа их размещения и быстрые темпы экономического и культурного развития ранее отсталых окраин страны. Капитальные вложения создают и обеспечивают оптимальные народнохозяйственные пропорции и гармоническое развитие всех отраслей народного хозяйства.

Неуклонный рост объема капитальных вложений, улучшение их направления и структуры, повышение их эффективности обеспечивают высокие темпы развития народного хозяйства и создают предпосылки роста материального благосостояния народа и повышения его культуры.

Преимущества социалистической системы народного хозяйства и в области капитальных вложений нашли свое яркое отражение также в условиях Советской Армении.

За годы Советской власти в Армении развернулось большое капитальное строительство, вступили в строй сотни фабрик и заводов, десятки электростанций, большое количество школ, больниц, жилищ и разных других культурно-бытовых объектов, обеспечивающих невиданный расцвет экономики и культуры.

За период 1921—1962 гг. капитальные вложения в народное хозяйство Армянской ССР составили 2390 миллиона рублей, причем больше половины этой суммы (1313 миллиона руб.) вложено в 1958—1962 гг. Из общей суммы капитальных вложений на создание и развитие ведущей отрасли народного хозяйства — промышленности направлено 1062 миллиона руб. (46,3 процента).

В соответствии со стоящими перед партией и народом задач происходит изменение в направлении и структуре капитальных вложений. Так, в 1952—1957 гг. на развитие химической промышленности было направлено только 6 процентов капитальных вложений, используемых в промышленности республики, а в 1958—1962 гг.—22 процента.

Растет также объем и удельный вес государственных капитальных вложений в сельском хозяйстве.

Непосредственным результатом капитальных вложений является рост производственных основных фондов и непроизводственных (потребительских) основных фондов. По данным генеральной переоценки на 1/I 1960 г. объем основных фондов народного хозяйства республики составлял 1,97 миллиарда руб.; из них основные фонды государственных и кооперативных организаций (без колхозов) — 1,4 миллиарда руб. 52,5 процента основных фондов составляют производственные основные фон-

ды, в том числе 26,5 процента—производственные фонды промышленности, 42,5 процента—непроизводственные основные фонды, в том числе 29 процентов основные фонды жилищного хозяйства.

В республике осуществляются мероприятия по ликвидации распыленности капитальных вложений, улучшении их структуры и обеспечении выполнения плана ввода основных фондов.

За последние 4 года удельный вес строительно-монтажных работ снизился на 10 процентов и в 1962 г. составил 62 процента вложений. Если в 1957 г. план ввода основных фондов был выполнен на 66 процентов, то в 1962 г. он выполнен на 72,6 процента. Тем не менее переходящее строительство растет, и поэтому мероприятия партии и правительства в области планирования капитального строительства в 1964—1965 гг. дадут свои положительные результаты, повысят эффективность капитальных вложений.